



ՏՆՕՐԷՆ-Ի ՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 44


ՀԱՐԱՐ

30 ՅՈՒՆԻՍ 1907

ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ

ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ

ՓՎՂՂՂ ՓՎՂՂՂ ՓՎՂՂՂ ՓՎՂՂՂ ՓՎՂՂՂ ՓՎՂՂՂ ՓՎՂՂՂ ՓՎՂՂՂ



ԶԵՆԻԹ

ՄԵԾ ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՋ, 1900

ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՆԱԿ. — Նեոսոլիի գիտարանին. 1903

ԱՐՏԱԳՈՑ ՄՐՑՄԱՆ. — Անդամ ժիւղիի. Միլան. 1906

ԵԻՆ. ԵԻՆ. ԵԻՆ.

ԱՄԷՆ ՄԵՏԱՂԷ ԵՒ ԱՄԷՆ ՄԵԾՈՒԹԵԱՄԲ

ԸՆԴՀ. ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉԻ ԹՈՒՐԻՒՆՑ ՀԱՄԱՐ:

Գ. ՄԱՐԳԻՍՅԱՆ ԵՒ ԸՆԿ.

Մեծ վաճառատուն ժամացույցներու, շորա-
ներու եւ գոհարեղէններու

ԹԻԻ 16 = ՊԱՀՃԷ-ԳԱԲՈՒ = ԹԻԻ 16

Օւոգար-Պաք հաստատութեան ղեկավարը:

Ի Բերա, Կ'գտնուի գոհարավաճառ Տ. Տ. ԷՄԷԼԻՆԵԱՆ ԵՂԲԱՐՑ քով,

Թիւ 400 Մեծ-փողոց.

ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ

(آ. آصاوریان) شرکت مطبوعه — باب عالی حاده سنه ۱۳۲۶

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պաշտ-Այի հաստատութիւն Թիւ 52

Հատոր 40 փարսա



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
խիանցամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կտրի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղաւակի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԲԱՅԹԻՔ ԿԱՅԸ. ՓԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան տմենէն կտարեւ լողործուածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐԺԱՆԿԱՆ
ՄԱՍՆԱՆԱԿԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|---------------|--|
| ԲԵՐԱ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՏԱՐ | Չարլը Պօյու, թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնահիղեր գաւառներու բոլոր քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ
343 կրկին, Տիւզդուլուի տունը:



ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 44

ՇԱՐԱԹ

30 ՅՈՒՆԻՍ 1907



ՄԵԼՔՈՆ ԳԱԼԷՆՏԷՐ

Շաբթուս դժբաղդուքիւնը ունեցանք կորսնցնելու ձեւագիտութեան միակ ներկայացուցիչ Մելքոն Գալենտէր, որ մի եւ նոյն ժամանակ իր Ակնաբարբառ յօդուածներովը անուն մը զինած էր իրեն համակիր ստուար ընթերցողներու շուրջ :

Ե Ա Ն Գ Օ

[ԾՈՎՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ]

ՏՈՒՆԻ ՎԱՐՊԵՏԸ

«Մայրքս դպրոց դրաւ զիս (հոսկի ըսկըսաւ Քաջ նաւավարն այն պատմութիւնն իւր ամբաւ) :

Սագրգցի կին մ'եր վարժունիս, ում մայրիկս Սուրն ու կսաւ կը սանէր, որում հայրիկս... (Լաւ չէր որ հայրն ալ ընծայ տար վարժունիւն) :

Կ'աշխատէի. ուշիմ էի իբրեւ Յոյն.

Սակայն ուսնիլ ինձ տանջանք մ'եր արդարեւ. Նըսեմ խուցին մեջ գոչէի միշտ «արեւ».

Ու միշտ մօրմէս կը խնդրէի որ հանէ

Զիս դըպրոցէն, կընկան քովէն: Սակայն Նէ «Տըղա՛ս, կարդա՛ որ մարդ ըլլաս» ինձ կ'ըսէր,

Ի գո՛ւր. չը կա՛ր սրբիս մեջ բնաւ ուսման սէր.

Կամ վարժունիին չը կըրցաւ սէրս արծարծել Հուսկ ուրեմըն զիջաւ մայրիկս. «Աղէ՛կ, ե՛լ. Բայց ի՞նչ գործի կ'ուզես մըսնել որդեա՛կ իմ»: Մայրս ի ծովափ տարի, «Իմ սէր, մըսերիմ, Միշտ անըրջոցս առարկայն ահա՛, մայրի՛կ. Քեզմէ յետոյ, ու քերեւս իսկ քեզի չափ Կը սիրեմ ես այս ծովն անկայ եւ անչափ:»

ՆԱԽԱՎԱՐ ՎԱՐՊԵՏԸ

Բարեկամն հօրս էր Թոսորին, քաջ նաւագ, Ու բարի մարդ: Ծովագն ո՛րքան կայ աւագ, Եւ մանաւանդ ո՛րքան ունի ծով խուրթեր, Որքան վիհներ, ո՛րքան հողմունք դեմ ու քեր, Գիտէր ամենն: Ելած էր նա Մարմարայ, Ուր թլփալորդ քաւալի լոյծ լեռնն հըսկայ: Քաջայանդուզն՝ էր խիզախած ի Պոնտոս, Սեաւ, փրփրեռախ, մըսամըռունչ, մըսահոս, Յարում սրածայր սրանան ալիք սոսկասոյր. Յանախ վարած էր Թոսորին անդր իւր կուր:

ՆԱԽԱՎԱՐ ԱՇԿԵՐՏԸ

Փոքրիկ Նանֆօն մանր իւր ձեռք մէկ քիակ Առաւ նախ. այլ զօրացաւ շուտ իւր դասակ: Իւր վարպետին աշկերտ մ'եղաւ արժանի, Քաջ ուսնելով զոր ինչ արուեստն այն գաղտնի

Ունի. արուեստ տաժանակա՛ն դըժուարին. Ի՛ ի՞նչ եռանդեամբ բազումն այնմիկ, ո՛ն փարին

Այլ բող նորէն Նանֆօն ինքն իսկ մեզ խօսի. «Մէկ դահեկան կուտար վարպետս օրն ինձի: Բայց իրիկունն, նաւամասոյցն, հո՛ն կեցի՛ր. Հոն պիտ' ելնեն *հազընիներն* յոգնածիւր. Մասիդ ծայրով բըռնէ՛ նաւակներուն ծայրէն, Զի՛յ ձի՛յ տասնոց անա կ'ելնեն գըրպանէն: Տուն կ'երթայի, կը համրէի. չորս, հինգ, վեց: Հինգ վեց դուրճէ. հարստութիւն մ'եր ինձ մեծ.

Եւ ամէ՛ն օր, ձի՛յ տասնոցներն. «Ահա, մա՛ր. Եթէ դըպրոց զիս բողունիր դու ցայսօր, Այն կընկան քով, *տակալիճային*, որ... որ ինքն ալ կարդալ չը գիտէր բնաւ, Եւ որուն Ա՛յնքան շախմատ, խափուէ, միւրգ, բուրգ տըլիւր դուն:

Կը պահէր մայրս բտակս. «Ապրի՛ իմ զըղաս. Տըղա՛ս, բտակդ, ու հօրդ ու ի՛մս բտակս Ամենք քուկդ են:» Այո՛, մայրս ալ կը շահէր. Միշտ *թանդեկա* կը շինէր ու կը ծախէր. *Թանդեկա* լայն, նա՛հ, աղի չափ: Ստամպոլա Կ'երթար օր մը *թանդեկայովն*, Եւ ահա (Նաեւ հետն էր առած իմ շահս ալ բտակ) Եւ ահա ծանր արծաթ դըրգալ ու պընակ Կը բերէր տուն: «Ամենքն ալ քուկդ է, զըղաս. Մեր տունն ու տեղ, բտակ, պըղիճն, արծաթ բաւ:»

ՆԱԽԱՎԱՐ

Բայց անհամբեր էի նաւակ մ'ունենալ. Նաւակ մ'իմնի, անոր միակ տէրն ըլլալ. Ապրիլ ի ծովուն, ուրիշ իր պրկունքն: Այլ եւ զմայմամբ դիտել կապոյտ Կոհակունք՝ Իմ բազմոցիս հանգստական բարձունքէն: Տեսայ նաւակ կարն ու նեղ (իմ տարիքէն վեր բան ընել չուզեցի. վեցասնամեայ էի յայնժամ — իսկ տէր նաւուն բազմամեայ Սակարկեցի. հազար բաւ. հինգ հարիւր Տըլի. չեղաւ. յիսուն ելայ, հուսկ՝ հարիւր վեց հարիւրի հաւանեցաւ: Բայց մարդ տե՛ս. Մեծ փոյր մ'ունի եղեր: Եկաւ. «Այո՛ ես Կուտայի քեզ՝ նաւակս. սակայն ի՞նչ ընեմ Հաւանութիւն չը տար քուրիկս իմ խոհեմ»: Վա՛յ: Բարկացայ: մարդը տարի սընտրան, *Էսնաֆին* քով խաղի խայտառակ ըրի զան: Ինձ խոստանալ՝ ալեւոր մարդ՝ պատանոյս: Ապա ստեղծել փոյր մը: Կերդնում, ո՛ն պատանոյս վըրան, ես տէր պիտ' ըլլամ ա՛յն նաւակին:

Վրճոեց էսնաժն որ՝ գործ չունեի հոսեղ կին։
Վեց հարիւր դրի առջին, նաւն առի։
Մի կ'ըսէ թէ լասն այն կրտոր մ'էր ծառի։
Մըսայ մեջն, եւ աւելոյժ ալիք պարառին
Նաւակս համբոյր, զրգուանգ, նըւագ։ Ծով
խորին

Սարսափ ազդեց յիս, սակայն նո՛ր ալ աւելն.
Համակուեցայ գոռոզութեամբ լ'անիւ մեծ։
Ձոյգ փայտ նըքին, եւ մըկանուն մեծամեծ
Այլ՝ գոչեցի՝ պիտի յաղթեմ ծովուն յար։
Եւ ըսկրայ թիւլ, թեւել խանդավառ։

Հարսարուքիւնս, զօրութիւնս հռչակուեցաւ։
Արհեստակցացս եղաւ ասի փորին ցաւ։
Պոռացին. «Պե՛տ է աւելե՛րի դեռ, սորվի.
Փոքր է, պե՛տ չէ մարդ այդ սըղուն վստահի։»
Հանգե՛ր ըրին որ չը ստանամ *թխքրէ*։

Տեսուչն՝ աչիս, ձեռացս հայեացք մ'արձ-
կե՛ր է,

Ի՛նչացս յանդուզն, նըզօր ձեռացս առաջի
Յանըզգայս իմըն *թխքրէ* կը բռնի՝

Նոր ոյժ կ'առնեմ. նաւ մ'ալ նոր, մեծ իբ-
րեւ խուց։

Եազըճիներն՝ են մեծերն՝ ինձ յանախորդ
Կ'ըլլան։ Եւ ես չունիմ միայն մարդ նաւորդ,
Այլ... Ազնիւ փայտ, մարմար ու պէսպէս
փաւեր

ՅՆԵՐՈՎԱԿԱՆ ափանց եմ միտ փոխադրեի
ՅԱՍԻԱԿԱՆ եզերն, ուր ի՛նչ *եազըճի*
Կը կանգնեին տուներ անդուլ եւ անհիգ։
Բայց ոչ միայն իրենց, այլ եւ աղփասին
Տուն անխրտի այն մեծանձունք շինեին։
Եւ զի սօղեալ էին փոխադրած նիւքերս,
Ինձ յիւրի վարձ կուտային խաղճաներս։

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Ա՛լ ժամանակ համարեց մայրս որ մըսեմ
Ուր *աշխարհ* կոչեն։ Աղջկունք գեղադեմ,
Ընչեղ, *սխման*, ու համեստ ալ, պատուաւոր,
Առաջարկուեցան ինձ. պատառ կարեւոր։
Սակայն մայրիկս, *նիփօքոս* չըզնաղ կին,
Աղջկան մը վրայ նըւաղ յարգեի գեղն, ոսկին,
Քան ծրագրուիս պարկեցութիւնն երկնաւոր։
Որ յաղփասին բաճի յանախ հիւղն անուր։
«Առնողը դուն, Եանգօ՛. բայց ես պիտի
հաւնիմ.»

— «Ի՛նչպէս կ'ըլլայ. բայց կամդ ըլլայ միտ,
մայր իմ։»

Մերկ որք աղջիկ մ'աղփասութեան ի խորոց

Հանեց ի լոյս մայրս, աղջիկ մը գլուխ-գոր-
ծոց.

Համեստ, հրմուկ, աշխատասէր, գեղեցիկ-
«Ահա եւ կինդ, ու հօրդ ու մօրդ ալ
դրստիկ։»

Մասնի, մասնոց, մայրս ետ ամեն ինչ նմայ-
«Տան հոգեւեկն հանգչիլ կրնամ ա՛լ հիմայ։»

* * *

«Մասկարա՛ ազընթըսը,» մարդս ընդհատեց.
Եւ աջ ու ձախ, ջուրց եւ ափանցն այն տա-
րեց

Արհամարհո՛տ ձրգեց ալնարկ մը սաստի՛չ.
Ծիծաղե՛ր ջուրն, եռա՛ր, պարե՛ր, դի՛ւր, քո-
վի՛չ,

Եաշըներուն, սրսկապանաց ըսուեց *սակ*.
Եւ զիս զարթեալ հե՛տ, սրտայոյզ յիշատակ...:
Ալիք միթէ չե՛ն պատկերե՛ր յիւրեանց խօլ,
Վառ, սրավար ի կայքս, ի կիրս սիրամուր,
Ձկենցաղ էիցն Արեւելեայց հրախանդ,
Ոյ՛ հոսեւան ի ծաղկաւե՛տ ի գորգս անդ,
Ասե՛ն կենաց ըզմասկարա՛ն կասարեն, =
Քառաթելեան պար՝ զոր մըրմունք ջուրց

զրգո՛ւնն,
Ուր մարդն՝ հոսուն, քրոչուն է՝ ջուրցն հան-
գունակ,

Ուր ի վարդ՝ կինն, եւ փոխի այրն յարեգակ
Վարդ ուռուցիկ ու բոցաւունչ, հալական.
Արեգ՝ որոյ քանձ էն նաճանք, հե՛տակա՛ն...:
Եւ զկընդէն իւր՝ նաւավարն ինձ խօսե՛ր,
Յորժամ եր նե մասաղաթի, համակ սէ՛ր...:

Մասկարա՛. բառ. դիւքական, անգո՛ւթ, սա-
կայն

Ճեմարի՛ս յոյժ... Բառն ու վեպն տեղին այն
Ձիս վեր ի վայր յուզեցին... ջուրցն հայէի
Միմեանցահար, բուռցիկ, դողդո՛ջ, փր-
փրալի՛:

Եւ հայէի ի վեր յերկինս այն կապոյտ,
Ուր բնթանայր թեթեւ ամպիկ ներմակ շոյտ.
Եւ ի յերկնից՝ ոյր բընակ էն յոյժ անմեղ՝
Խոնարհե՛ր աչխ ի յարկսն, զորով՛ դալար,
դեղ,

Եւ յորս...

«Եանգօ՛, շարունակե՛ պատմութիւնդ։»

Ե. ՏԷՄԻՐԶԻՊԱՇԵԱՆ

(Յաջորդ թիւով, Եանգօի ընտանեկան
կեանքին նկարագրութիւնը)։

Ն Ի Ն Ի

ՅՈՒՇԱՏԵՏՐԷՍ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

Մայիսի առաւօտ մը քեզ ճանչցայ Նինի: Այն օրը երկինքը այնքան կապոյտ էր, և դաշտերը այնքան կանաչ, զեփիւռը այնքան անուշ էր և ծաղիկները այնքան բուրմնաւէտ, թռչունները այնքան գուրգուրանօք զիրար կը կոցէին եւ սոխակը այնքան սիրուն կը դալալէր, որ քիչ մնաց ոտանաւորներ պիտե գրէի:

Բայց չի գրեցի, դող մ'ելլար, Նինի: Նաև անոր համար որ դարունը սրտիս վրայ երբէք ազդեցութիւն չէ ըրած, բնութեան պէս միօրինակ բան երբէք չեմ տեսած, ծաղիկներու հոտը գլխու պտոյտ կուտայ ինծի. նոյն իսկ այդ զեփիւռէն հարբուի կ'առնեմ, և վերջապէս քու ձայնդ լսած օրէս ի վեր սոխակին երգին մէջ տիրացուական չգիտեմ ինչ մը կը գտնեմ:

Ահա ինչու համար, փոխանակ բանաստեղծ ըլլալու, զքեզ սիրեցի:

* * *

Երկնքին անհունութիւնը և կապոյտը աչքերուդ մէջ, քու տաան և ութ տարիններդ ամբողջ գարուն մը, ծաղիկներուն գոյնը և բոյրը այտերուդ վրայ, ձայնդ ամբողջ ներդաշնակութիւն մը, ձեռացդ մէջ կեանքս և ոտներուդ առջիւ սիրտս:

Շրթներէդ արքայութիւն մը կախուած կար, եւ անոր դրան առջեւ երջանկութիւն երազեցի:

* * *

Շրջագգեստիդ ֆրուֆրուն զեփիւռին և կուրծքիդ վրայի տանթէլները՝ ժայռերու վրայ փչրուած ձերմակ ալիքներու իւլիզիօնը կուտային ինծի:

Ամբողջ տիեզերք մը կար նայուածքիդ մէջ: Զեռքի սեղմումներուդ մէջ ելեկտրական հոսանքներ, և ամէնէն զգլխիչ բանաստեղծութիւնը՝ հանգրիճումիդ մէջ:

Ես քու գերիդ եղայ, Նինի, որ փետուր մ'ես սոսկ:

* * *

Եւ այսպէս ամիսներով զիրար սիրեցինք, այնպէս չէ, Նինի:

Բայց օր մը յանկարծ պէտք եղաւ այդ բուրաստանէն դուրս ելլալ, բուրաստան մը՝ որու մէջ մինակ դու և ես կայինք:

Վերջին համայնութիւնը դեռ չըջնար կայրին: Ես զիս կորուսի և դու ամուսին մը գըտար:

Մեր վէպը՝ կատակերգութիւնով մը վերջացած էր:

Երջանիկ եղիր, Նինի:

Մեր ամբողջ անցեալէն՝ երեք հատ չորացած յաւիթի զիրար կը գրկեն յուշաստորիս թերթերուն մէջ:

* * *

Եւ երբ զանոնք կը թղթատեմ այս վայրկեանիս, կաթիլ մը արցունք թղթին վրայ կը գլորի: Գիտես ինչո՞ւ կուլամ, Նինի, աղուոր Նինի. կուլամ՝ որովհետեւ ... ուրովհետեւ սիկառէթիս մուկը աչքիս մէջ կ'երթայ կոր:

Թ. ՍԱՓԻԱՐ

ՍՏԱՄՈՔՍԻՆ Ի ՆՊԱՍՏ ...

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ ՊԻՍՔԻԻ

Սկահակի (ֆեսսէ) մը մէջ յեց հաս հաւկիթ կոսրեցէք եւ զարկէք մինչեւ որ թեթեւայ, աւելցուցէք օխա մը բարակ շափար, կէս օխա ալիւր, յետոյ սեւ չամիչ (ֆիշիշ): Խառնեցէք ամբողջը մէկ, յետոյ խառնուրդը պրզփիկ ձեւերով ամանի մը մէջ դրէք ու փուռ խրկեցէք, կէս ժամու չափ թող եփի: Այս պիսկիւլիները կրնան երկար ատեն պահուիլ եթէ թիթեղէ տուփի մը մէջ ու չոր տեղ մը դրուի:

Ի Զ Մ Ի Տ Յ Ի Ն Ե Ր Ո Ւ Ն

Մեր սիրելի բարեկամ և աշխատակից Տեար Աբրահամ է. Կառ. ձեռն, մօտ օրէն գործով Պոլիս այցելուին. առթիւ, կը ծանուցուի Իզմիտի Պատ. Ժողովուրդին թէ՛ անոնք որոնք կը փափաքին Հանրագիտակրթամանորդագրուիլ, հաճին յիշեալ էֆէնտիին յանձնել դրամը:

ԱՆԻՄԱԿԱՆ ՕՒՅԳԻՐ

Լ. Գ.

Եւ որովհետեւ Miro Barsamo և A. Antonio սիրելի մտերիմներս Բերա կը բնակին ուստի պէտք է որ օրագիրէս քաղեմ այն էջը՝ որուն մէջ որչափ կին՝ այնչափ՝ սէր, որչափ գիր՝ այնչափ սրամտութիւն, որչափ phrase նոյնչափ՝ և քիչ մ'ալ աւելի phase գանուի, քանի որ անոնք ալ պիտի կարգան, անոնք ալ vauter պիտի ընեն անառակիս յօդուածը կամ գաղափարներուս գաւառուածը:

Առաւելութիւն մը զոր մի միայն իմ մէջս կը տեսնեմ հրապարակագիրներուն վրայ, ամէնուն քմահաճոյքին տեղեակ ըլլալս է, այնպէս որ երբ Հայր Աբրահամ Այվազեանին հետ խօսիմ, անպատճառ մէջ կը բերեմ անոր Երուսաղէմ երթալը, Եաֆայի նարինջները: Երբ բազդը Վահան Ծ. վարդապետը դէմս հանէ, իսկոյն դէշ երաղէ մը արթնցածի պէս, խելքս կը ժողուեմ, (որչափ որ ունիմ) և իսկոյն մէջ կը բերեմ թէ ինչո՞ւ իրեն գաւառային առաջնորդութիւն մը չեն ի տար: Երբ Հրանտ Ասատուրը գտնեմ թռամվային մէջ, իսկոյն խօսք կը բանամ Յ. Յ. Պարոնեանի տաղանդին վրայ և սքանչացումով կը խօսիմ այն մեծ գործին վրայօք զոր պատրաստէ պիտի, պատրաստէր պիտի, պատրաստելու վրայ է:

Բայց որովհետեւ նիւթս, ամէն օր դէմս ելլողներու ներքին հիւանդութեանց վրայ չէ որ պիտի խօսիմ, ուստի par un petit sot je passe a mes sotteries:

Քառասուն ոսկիէն վեր տան վարձք տընող, իրենց դրամովը գետնին տակը անցնող, գիշերները ուշ ճաշող և minuitէն ժամ մը վերջ միայն տուն հասնող, հաւնած մէկ կնիկին Attaquer ընելու համար իրենց տաման, խանութի մը համալին ձգող, օրը երկու անգամ aux col փոխող, և ամուսնութիւնը՝ ֆոխափ մէկ տեսակը դաւանողները միայն գիտեն յարգը այն ընդարձակ

պարտէզին որուն ժառանգ sk Ծիկոր անունը կուտան Բերա:

Ի սրտէ կը խրատեմ այն ամէն բարեկամներս ու ծանօթներս որոնք կարգուած ըլլալով իրենց կիները a la folie կը սիրեն, ոչ թէ միայն թռամվայով առջեւէն. այլ թիւնէլով ետեւէն անգամ չանցնին այս դիւթական պարտէզին, գլխէ, քսակէ, à raison de plus իրենց կնիկներէն ալ չելլալու համար:

Կին, ալքօլ, միւզիք, հա երեք զգլխիչ բաներ որոնք կարող են նոյն իսկ տէրպապաներու ճիւղապէս, ծերերու քթախոտի տուփը նետել տալ, այնքան կը յուզեն, կը ներգործեն պէտք է ըսել:

Ահագին մանիվէլ մըն է որ կը դառնայ հոգ չուրջանակի: Երեւակայեցէք ընդարձակ պարտէզ մը richement décoré որուն մէջ փոխանակ պարտիզպաններ սքանչելի ծաղիկներ զետեղելու, ամուսիններ և կամ եղբայրներ իրենց գեղեցիկ կիներն բերած ցըրուած են հոս հոն, և որոնք զսպանակէ մը լարուածի պէս կը դառնան ու կը դառնան անշուշտ դիտողաց ցոյց տալու համար իրենց աջը ձախը, facep և profilep:

Ամէն մարդ որ պեխ ունի, սովոր է և կամ ունակութիւնն է դիտել կնոջ որոշ մէկ մասը, ինչպէս. կան մարդիկ՝ որոնք կնոջ աչքերը դիտել կը սիրեն, կան որոնք հիւսիսային եւ հարաւային Միացեալ Նահանգներուն վրայ կ'ուզեն պտտցնել իրենց մարած նայուածքները, կան ալ որոնք փութ միս ու տեղնուն համար միշտ կանանց culotteին կը հետեւին, և շատեր ալ կան որոնք դերձակի մը չափ առնելուն պէս մազերնէն մինչեւ եւ ղունգներու ծայրը կը զննեն կը քննեն, և ապա կ'սկսին մանել իրենց փնջիկ մը բուրդը որ քիթերնուն տակը կը կենայ:

Ես ինքս, ձեր անառակ որդին, կնոջ վրայ կը սիրեմ այն մասը որ ժառթիւներէն վար

պօթերէն վեր կը գտնուի: Կը վերանամ կը վարիջնելակեմ (°.) Ի տես այն սեւ գուլպաներուն որոնք շատ բան կը յայտնեն ինծի անխել հեռագիրով իրենց վրայ կրող ամբողջութեան մասին:

Պարտիզականները գլուխնին և ձեռքերնին քաց հաւերու պէս երկինք կը նային և անձրեւ կը մուրան Նիովայէն: Առանց պարտիզական մը ըլլալու, որովհետեւ ամուսնացած չեմ որպէսզի կին մը ունենամ պարտիզականութի ըլլայ մանկան ըլլայ մեծի, ես ալ իմ ովսանն կ'աղերսեմ Ստեղծողին որ իր անհուն ծոցէն չի խնայէ անձրեւը Բերայի վրայ, որպէս զի առիթը ունենամ վայելելու այն տառաւրովիները զոր խուսկով կնդրուելով կը փնտուեմ կնոջ վրայ:

Երեւակայեցէք յորդ անձրեւ մը որ կը տեղայ Բերայի մայրերուն վրայ և կ'ինքն որոնք վեր ժողոված ժիւրերնին և ժիւրսնին, թոյլ կուտան աչուկներուդ թափանձել ներս, ֆուռ ֆուռ միսօներէն, սեւ մետաքս գուլպաներէն ալ ներս, անդունդը, վերջապէս հոն ուր Սէր և ՈՍԿի իրար կը ցուլուին:

Բայց տեսէք թէ Ժառնգն sk Ֆլեօնի զգլխիչ և երազացնոր կանացի դուռը ինչ դռներ քացաւ մտքիս հորիզոնին վրայ:

Երանի... քիւր երանի կուտամ գետնի մըջիւններուն որոնք վարէն լայնօրէն կը դիտեն այն ամէն մանրամասնութիւնները որոնք կը վրիպին մեր հորիզոնական նայուածքներէն:

Առանց գաւաթ մը պիտա իսկ խմելու գինով մըն եմ հիմա, ցնորած մը, խելայեղ մը: Կ'որ քարէ սեղանին մօտիկը նստած, սիկառ ի բերան կը դիտեմ խելագարի մը անորոշ նայուածքով այն դեղին պօթերուն վերջաւորութիւնները, որոնք մին միւսէն բարեձեւ կ'անցնին մօտէս բիզմա ընելու պէս:

Եւ կ'սթաբիմ պահ մը տեսնելով ինձ պէս շատեր՝ որոնք այդ շքեղ ծառաստանին allexներուն մէջ պոչիկներու պէս կը հետեւին անոնց, իրենք ալ անշուշտ տեղ մը սեւեռած իրենց նայուածքը քաշող ու համոզող... եհայինք րը:

ՓանՖաուր կը գողայ մէջտեղը, մութը կը թանձրանայ տակաւ, կաղերը աւելի

փայլ մը կուտան վօլան բէշերուն, որոնք գետնի աւազները քերելով կ'անցնին կրկին վերադառնալու համար, և շատեր, անոնք որոնք միմիայն օդ առնելու համար եկած են հող, կը մեկնին, կը քաշուին իրենց հոտին ձգելով բուն ծաղիկները՝ քարի ծաղիկները, որոնցմէ դուրս եկող բոյրը լուծուելով ալքօլին մէջ, զմարդ պահ մը դուրս կը հանէ իր մէջէն և կը տանի վեր՝ շատ վեր, ուրիշ ամպերը անգամ չեն երեւար... անհուն միջոցին ծոցը:

Իհու հող կը մնամ սեղանին առջեւ շլմորած, շուարած, երբ մօտս դրուած սեղանը կուգան գրաւել երկու հոգի. զգլխիչ կին մը և ծերուկ թիթօն մը:

Հակապատկեր պիտի պօռար մէկը որ կեանքին մէջը արգիլուած պտուղ կերած չէ:

Մարդուկը հակառակ տարիներու բերան՝ զորս կը կրեր ուսին վրայ, պիշ պիշ կը նայի իր մօտի կնկան որ հեռուները կը դիտէ, ռանտէվուներ կուտայ, նայուածքներով կը խօսի ուրիշներու հետ և ատեն ատեն միայն կեղծ ժպիտով մը գոհացում կուտայ իր տարփածութիւն, որ հարուստ մէկը ըլլալը դէմքին խորշամներէն կը վազեր:

Պահ մը կը ձգեմ սեւ գուլպաներու դիւթիչ տեսարանը և ուշադրութիւնս կը դարցնեմ այս զոյգին վրայ, սերտելու համար անզուսպ սէրը որ օրէնք չունի, L'amour est un enfant de bohème qui n'a jamais jamais connu de loi:

Քառմէն իրաւունք ունի երգելու կը մտածեմ հիմա և իրօք ալ անանկ է:

Մին միւսը յաջորդող պիտայի գաւաթները, կարծես paravent մը կը քաշեն սիրամոլներու աչքին առջեւ: Ծերուկը ինքզինքէն ելած է հիմայ, ատեն ատեն իր բնական կարճուկ վիզը անզուսպ սէրէն մղուած, քառչուի պէս կ'երկարէ և ցամաք շրթները կ'ուղեն հպիլ poudre de lisին վրայ, մինչ վարպետ որսորդունին առիթը չի փախցնէր անդին քաշուելու, ալ աւելի քաշելու համար... կարմիրները գրպանին:

Այս աղտոտ տեսարանը կը մղէ՝ կ'ստիպէ զիս թողուլ աթոռս և հեռանալ այդ պատկերէն որ կրնար շատ բան աւելցնել իմ անառակի օրագրիս էջերուն:

Եւ հեռուն սովորած փորթիկ կառսօնը, որուն կը մօտենամ հաշիւս մաքրելու համար կը ծիծաղի, աչքերովը յոնգերովը այդ զոյգը ցուցնելով:

Հիմա պիտի համարձակի՞ք մեղադրել զիս իմ այս խել խօլ տարիքիս մէջ կնոջ պօթերն ի վեր նայելու փափաքիս համար, երբ անդին թուան զաւակները տեսնող փոտածներ, կինը ամբողջ կը վայելէն ու չեն քաշուիր: L'uomo diventa vecchio ma l'amore non muore!

ԳՕՊՈՍ.

ՊԱՏԿԵՐՆԵՐ ՕՐԱԳԻՐՔՍ ԷՁ ՄԸ

16 Յունիս Կիրակի

Այս գիշեր լուսինը աւելի ուշ պիտի ելլէ, ու կղզին արդէն իր երեկոյեան խորածանութենէն մեծ մասը կորսնցուցած է: Մութ գիշերները պլպլազարդ, ինձ համար ոչ նուազ վսեմ են, ու խորհրդաւոր քան լուսնի գիշեր մը որ իր բիւրաւոր հրապոյրներով կը տածէ զգայուն կղզեցիներու բազմաթիւ խումբ մը: Սովորութեանս համեմատ ճաշէն վերջ գիւղացիներու թաղին մէկ անկիւնէն միւսը կ'երթեւեկեմ. վերախոհելով երկար օրերու 14 ժամերուն վրայ՝ որ յաճախ կ'անցնին առանց օգտակար արդիւնք մը թողելու: Քանի գիշեր է ուշադրութիւնս կը գրաւէ փողոցին անկիւնը պարտէզին մէկ ծայրը ծովահայեաց խորխուղ տնակը պարտիզպանին, որ անհամեմատ տնակին խեղճութեան, մեծկակ լամբար մը կը վառի: Պզտիկ քառակուսի բացուածքէ մը ներս՝ որ պատուհանի պաշտօնը կը կատարէ, կը դիտեմ պարտիզպանուհին որ ան գրկին մէջ մանուկ մը, խորրունկ խորրունկ քուն մը կը քաշէ: Որքան նուրբ ու աղուոր է այս էմսիւլիոնը, բնաւ պիտի չի վերագրէի անոր պարտիզպանուհի մը ըլլալուն եթէ զինքը իր հիւղակէն դուրս տեսնայի: Դէմքին վրայ զետեղուած ցայտուն աչքերուն մէջ կարծես երկնքի անհունը կը պատկերանայ, անմեղ, անմեղ դէմք մը նման այն դէմքերուն որ

բանաստեղծներ, շուշանի կը նմանցնեն, իրաւի շուշանի չափ նուրբ. անկէ աւելի անուշ, անկէ աւելի հրապուրիչ. կեանքը իր խորշոմները դրած չէ դեռ անոր գիւղացիի ճակտին վրայ, քաղաքի կիներու մտահոգութեան արտայայտութիւնը չի կշռեր անոր նայուածքէն մին Աղամանդը իւր յղկուած վիճակին մէջ անգին է, իսկ կինը իր պարզ վիճակին մէջ միայն՝ հրեշտակ մը: Ճերմակ կաթնաթոյր կուրծքէն վար կախուած մանուկը՝ անյագաբար կը ծծէ մօրկանը կաթը որուն աչքերէն քունը կը կաթկըթի: Մոռցայ օրուան ամբողջ մտահոգութիւններս. մտածմանցս հոյքը ձրուեցան գացին: Որքան երջանիկ գտայ այդ կինը անգիտակից քաղաքի մարդոց հոգերուն: Իւր հացը, Աստուած է որ կուտայ ուղղակի, և սէրը իւր արտադրութիւնն է, նոյն իսկ ինքը, իրեն մէկ մասը, թէպէտ և անշատ բայց կուրծքէն ու վզէն վար կախուած միշտ: Անցայ կըրկին, ու կրկին անգամ մը աւելի դիտելու համար, ճշմարիտ մայրութիւնը այս գեղեցիկ Հէլլենուհիին մէջ: Բայց յուսախաբութիւնս մեծ էր, երբ տեսայ թէ կինը ճերմակ լաթէ վարագոյրը քաշած էր արդէն, ու անոր ետեւէն իր ստուերն էր որ միայն կ'երեւար անցեալ այն ամէն երջանկութեանց ստուերներուն պէս որ մեր մտքի ու սրտի յիշատակարանները կը կազմեն:

ԷՏՄՕՆ ՍԷՖԷՐ

Mots de la fin !

Երիտասարդ մը Oculisteի մը երթալով կը խնդրէ որ աչքերը դարմանէ: Oculisteը կը ռահելով թէ լոկակնոց գործածելու փափաքէն էր որ իրեն դիմած էր, 24 մէթր հեռուէն affiche մը ցուցնելով կըսէ.

— Եթէ աչքերդ իրօք կը ցաւին պիտի կրնաս կարդալ այս գիրերը . . . :

Երիտասարդը առանց վարանելու կսկսի կարդալ բարձրաձայն՝ ՋԵՆԻԹ, առաջնակարգ ժամացոյցներ գրպանի, միակ ներկայացուցիչ Գ. ՍԱՐԳԻՍՕՖ ԵՒ ԸՆԿ. Պահչեզաբու, ձեկալ պէյ խանին քակ . . . :



ԳՐԱԼՈՒՍԱՆԿԱՐ ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

Ենովք Արմենէն մատ մը մեծ ... հասա-
կով, մազեր սեւ ու գուռզ, ձայն մը կնկան
ու գուռզ, դէմքը ու գլուխը մազերէն փո-
քըր, մարմնով ամբողջ գլխէն փոքր, Պառ-
նասէն փախած ձեռքով մը, որ Սկիւտար
իյնալու տեղ ... Բերա ինկած է սխալմամբ,
բայց կրկին բանաստեղծ ըլլալու մղձաւանջը
ունի կարծես, իր վերջերս սկսած քերթ-
ուածներու շունչէն դատելով, բայց կարծեմ
պիտի նախընտրէ փոխանակ Արմաշ երթալու,
Բերայի մէջ քերթողական agence մը հաստա-
տել:

Ընդհանրապէս բանաստեղծները զգացած-
նին, իրականութիւնը ու սէրերնին կը քնա-
րերդեն, մինչ Պարսամեան մեծ տաղանդը
ունի առանց զգալու, առանց սիրելու իր
չըրածներն պատկերացնելու, որոնց մղձաւան-
ջովը հալածուած անընթացներու մէջ կոր-
սուած է յաւիտենապէս, ու այնքան երեւա-
կայտ է որ երեւակայական հերոսութիւններու
կը նուիրէ իր քերթուածները, այս ալ տե-
սակ մը իւշկիւզարութիւն է, բայց աւելի
աղէկ պիտի ըլլար եթէ տեքերու նուիրեր իր
քերթուածները, քան թէ կիններու, որովհե-
տեւ բնաւ չա՛ն ունեցած չէ կիններէն, հակա-
ռակ Բերա բնակելուն, բան մը որ շատ լաւ
գաղափար կազմել չի տար իր վրայ:

Շատ մը երազանքներ ... կան, որոնք
կարգ մը իրականութիւններէ աւելի գեղեցիկ
կրնան ըլլալ ... ու Պարսամեան տառնկ ցը-
նորքներով է որ ինքզինքը կը մխրթարէ,
փոխանակ իրեն հետ ուրիշ մ'ալ մխրթարելու:

Ալիիարը կը սիրէ ու կը կարգայ, որով-
հետեւ անոր յոգուածներէն առատ երազանքի
նիւթ կը գտնայ ... (Թաւշանձեան ուղեց
վերջ տալ Ալիիարի գրականութեան, միայն
Պարսամեանի նման անփորձ պատանիները ...
կործանող երազանքներէ ... փրկելու հա-
մար): Հակառակ այս միջոցին իր վարդապե-
տական թեզերը գրելուն ... Մասիսի մէջ,
սքեմին չնայելով Ալիիարի պսակ կը
հիւսէ Իգմիրի թերթին մէջ, բայց կերեւայ
թէ իբր պանքայի պաշտօնեայ, ի յարգանս

էսնաֆութեան՝ ըրած է իր գովասանքները,
որովհետեւ իրականութեան մէջ պարզապէս
նախանձորդ մ'է Ալիիարի, բայց ոչ թէ անոր
գրականութեանը՝ այլ Ալիիարի ըրածները
չկրնալ ընելուն համար:

Ալիիար ըրածը կը գրէ, Պարսամեան
Ալիիարի գրածը ... կերեւակայէ:

Ալիիար մերկ ուս մը նկարագրած ատեն
հաճոյք կղզայ, իսկ Պարսամեանին ջիղերը
թուռք կելլան այդ նկարագրութիւնը կար-
գացած պահուն:

Ալիիար Գատը-գիւղի սպասուհիներէն
հաց կելլայ կ'ըսէ, Պարսամեան Բերայի մէջ
անհամար քաղղներէն բան մը չ'հասկնար:

Պարսամեան կ'սպասէ յաւիտենական կեր-
պով անոր՝ զոր պիտի սիրէ: Վա՛յ անոր որ
պիտի սիրուի Պարսամեանէն, որովհետեւ
տաքերէն բոլորովին ջղագրգիւ վիճակ մը
ունի, նման այն անօթի մարդուն՝ որ ճաշի
սեղանին կ'սպասէ անհամբեր, ու կուտէ այն-
պէս՝ իբր թէ պնակներն ալ միասին պիտի
կուլ տայ, և մտադրած է ամէն բան թողուլ,
ինչպէս փառք, համբաւ ու բանաստեղծու-
թիւն, մորթին մէջ ու անձին մէջ ապրելու
համար անոր զոր պիտի սիրէ ...: Սակայն
լաւ չպիտի ըլլար եթէ փոխանակ սպասելու,
պզտիկ փորձեր ըներ սիրոյ, վստահ կրնայ
ըլլար որ աւելի պաշար պիտի ունենայ նուրբ
ու թրթռուն տողեր հիւսելու, չնորհիւ իր
ունեցած ովկիանեան ոսկեհոնգերուն ու ան-
համար բառի պաշարին, այսպէսով թէ համ-
բաւէն չպիտի զրկուի, և թէ մինք ալ իր
բանաստեղծութիւններէն, ու աւելին կայ,
անվերջ կերպով կաթիլ կաթիլ հատնելէ բո-
լորովին ազատած պիտի ըլլայ:

Պարսամեան՝ Ենովք Արմենին ... չատ-
ուածն է, Յարութիւնեանին մղձաւանջը,
Նազարեանին բարեկամը և Պերճուհի Նա-
զըճեանին ... սուփլեօնը:

Գ.Ռ.ՕՇ

Ասաբազար, Իգմիս, Տրապիզոն, Էրզրում,
Պանսրմա, Էսիրնէ, կը խնդրենք ընդ հուպ
մեզ հասցնել առկախ հաշիւները:

ԱՎԱՅԻՆԵՐՈՒՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Շատիւնց է իւր Ակնցիքս էֆրէրէնմիշ
էղերէյանք էվ կ'ուղէյանք իւր հրամանսիւցդ
թափսիլաթիւ վէ մաղպութ վարապա մը ա-
նինք, էվ մեր հոգուն տիւնը թնոտցնող մէ-
սէլէն հէլլ անինք. լաքին մէջերնիս անենկ
չիւրիւթիւ էվ զաղէթայի մէջ տէրճ ընկիւ-
կորայ խէլէմ փարոող մէյ մի չ'էյանք կրար
գննիւր, ըսելնիքէն էֆէնտի'մ խօրթաւս չիւ-
րիւթմիշ չանիմ, միտքանին սա' է թը' սէնկ
արանք նէնկ արանք, էթնէթըը (վերջապէս)
կայանք սովանք իւր Այնայ խնկաձէօրիւ մէհ-
լէյէն Զարջուան Ղերերնց Մանկասար աղան
կանչինք ու անէօր գըրիդ տանք: Զօրէ'մ
Մանկասար աղան՝ Արուի'իւն վարժապետին
փէշին տիւն ելեր է, էվ այլմ ժամանակ ալ
վերի մէհլէն հոգարարծիւթիւն արած է, ան
իր խէլէմին քէսպ արած շիւրիւթօլը՝ բարօլ
մի կու հասկցնէ հրամանսիւցդ:

Գլխիւցառութիւն կուտանք իսէ տէ, աֆ
կ'անէք ճէշէրէթիւս, աս ա'ն Մանկասար ա-
ղան է իւր՝ Ըստամպօլէն Ակինը ձէօրը էկած
վարժապետները կու քննիւր, վէօ'ր նի'ւր
բանին դար նը վար կու գնէր՝ վէօ'ր նիւի'ւր
չի գար նը, քիրան կու բռնիւր (Չորեպանին
յանձնել): Հէշ մտքէն չիլլեր՝ աւուրը մէկը
կինէ ասնիկ՝ տիպօմալիւ ճաշիւրիճիճօզ վար-
ժապետ մին էր էկիւր Ըստամպօլիւ, մեր Ման-
կըսար աղան ծնցաւ դիմացը, էվ հարցուց
թը, «Ակէօր նահապետ իւր երծին (երազին)
մէջ նէրաւման մի տեսերեր նը՝ ան նէրաւ-
վանը հըմայ ս'ւր է » . Սէվտիւկիւմ
զիմդօռթը՝ գիտցաւ թը սատընըն դի-
մաս խըպըլի տի խաղա, հալպուքի հարսի
պէս անխէօս մնաց, էվ պէօչիւն վրայ նայի-
լէօլ Այնէն բոսուեցաւ:

Այժմիւս՝ գանք ի կարգ խնդրիւս, սա
ձեր զաղէթան քիշ կու մնայ թը՝ մեռելը տի
խնտացնէ, աս խուսուսին քէսպ արած չէօճ-
րէթնիտ իւ մէնէնանիդ չի կայ, էվ բարէօլ
մի ֆարդին գնացանք իւր հրամանքնիդ ալ
ծառայականիւտ պէս տիւղ պօղաղ մարդիւն
մէ'յն է'ք, էվ իւր իւր ծուռ բան մի կի կու
տեսնէք նը դըգմին կիշնէք, նէ խայճը կու
բուէք նէ խըյմէթը էվ ինկզի (ընկոյզ) ծառի

պէս կու ձաղըկէք, օ'վ կուլի թող ընի.
հալպուքի՝ պազի պազի ակնցիական բաներ
ալ կու գրէք իսէ տէ, անէօնց էմմէ'նս ալ
մաղպութ մի թանգիմ էղած չին, վէ էվէլօք
խալէթներ կու պարիւնակին, ուղեցանք իւր՝
էկէր խապիլը կայ նը աս բանին էռէշկը աւ-
նինք: Ըսել չինք ուղեր թը՝ մեր վրայէօք
բան տէրճ մի անէք, հաշա՛, զօրէմ հէտտէր-
նիս չէ ուր հրամանսիւցդ թէքտիւր անինք իւ-
վաղիֆէնիտ իպթալ անինք. պիլ ախը'ս, է-
վէլէօք մէմնիւն իւ մէսրիւր կուլինք իւր
մեղ ալ մտաց չէք հէներ, լաքին՝ Այնայ լե-
զիւն՝ անէնկ նէօրէլիւկ քերականիւթիւննե-
րիւ միւճիւպօլը չի գըվիր. ա'ս խուսուսօլը
միշտախպ տեսանք իւր՝ ա'սը մեր քերակա-
նիւթենէն քանի մի միւհիւմ կանիւններ և
բառեր թէպիւղ անինք հրամանսիւցդ, էվ թը
իւրիւր խապիլը կայ նը՝ ասկի էթըը գրադ-
նիդ անէօր միւճիւպօլը խէլէմի առնիք իւ
տէրճ անէք, վէօր ի ներքօ գրիւս ծօցը իշար
արանք:

Օթթիւս, սըթթիւս, նըթթիւս, տըթթիւն:

Դարնիդաս, դարնիդան, դարնիվեր դար-
նիվար:

Սէնկս, նէնկս, տէնկս:

Փէօս, ֆէօտ, ֆէօն:

Սվկի, նվկի, տվկի:

Դէօռ, դէօռը, դուվիքը:

Մերինօնցը, սվօնցը, նըվօնցը:

Վերինօնցը, վարինօնցը, օթթիւնօնցը:

Վէ հաթտայ, սախսիկ՝ կ'ըսինք կանաչ
լօլլափին (լուրիա), սլիկ կ'ըսինք չոր լօլլա-
սին, լօլլաս կ'ըսինք մըջի կուտին: Պարկուկ
կ'ըսինք ծիրանին, մամէօս կ'ըսինք սալորին,
գար կ'ըսենք խաւրծիլին, էկիր կ'ըսինք լա-
տենին, կոր կ'ըսինք կարիճին, խլեզ կ'ըսինք
մողէպին, հնծան կ'ըսինք այգետան, թանիւր
կ'ըսինք խոր փռան, բաղարջ կ'ըսինք անաղ
հացին, շարօց կ'ըսինք ճէվիզլի սուճուսին,
մօչու կ'ըսինք ծօին, քլ կ'ըսինք քային, լիւկ
կ'ըսինք կորին:

Պախի մնացածը այլմ ժամանակի մի իֆայ
կանինք էֆէնտի'մ:

ՄԵԼԻՐՈՆ ԳԱԼԷՆՏԷՐԵԱՆ

ԻՆՉ ԳՐԵՄ

Ընթերցողներէս ոմանք թերեւս զիս մեռած կարծեցին, ուրիշներ՝ հարստացած, քանի որ բաւական ատենէ ի վեր վազ անցած էի գրելէ կամ s'il vous plait, գլուխ արդուկելէ:

Թէ ինչո՞ւ չէի գրեր:

Յօդուած գրելը, սիրելիս, տեսակ մը ախտ է, որմէ վարակուողները դիւրաւ չեն կրնար օձիքնին ազատել:

Ամիս մը, երկու, երեք՝ չես գրեր, քեզի այնպէս կուգայ որ ալ վերջ տուած ես այդ ունակութեան, բայց չորրորդ ամիսը՝ այնպիսի առիթ մը կը ներկայանայ, որով կ'ստիպուիս նորէն գրիչը ձեռք առնել եսկի համամ եսկի քաս:

Եւ անգամ մը որ սկսար, c'est fini հիւանդութիւնը կրկին կ'սկսի մտնել քու մէջը:

Հիւժախտին, մեքեփիսին դարմանը թերեւս օր մը գտնուի, բայց ասորը ... չեմ կարծեր:

Եթէ ըսածիս չէք հաւատար թերթիս Տնօրէնին հարցուցէք:

Քանի քանի անգամներ ալ ձանձրացած Մալաթիացի սիրելի բարեկամիս Համբարձում Պէննէեանի պէս օրլախնի ընթերցողներէն՝ հրաժարեցաւ այս վսեմ առպարէզէն, և ամէն անգամ ալ կրկին փարեցաւ թերթին այնպէս՝ ինչպէս որ պիտի փարէր քսան տարեկան երիտասարդ մը տասնեակինգ տարեկան նոնոչիկի մը:

Եոհո!

Դիտած էք արդեօք թէ մեր մէջ երթալով բարքերը փոխուելու վրայ են:

Այս բանը բացատրելու համար հեռուները երթալու պէտք չ'կայ, պզտիկ օրինակ մը տամ և պիտի համոզուիք:

Անշուշտ գիտէք թէ թատերական խումբ մը ունինք որ Օսմանեան Թատրոնին միակ ներկայացուցիչը կրնայ համարուիլ:

Այդ երանելի մարդիկը փոխանակ այս բանը իրենց պատիւ մը/համարելու ու ինքզինքնին հպարտ պգալու, այն տեսակ ջնջին հաշիւներ մէջտեղ կը նետեն որով յառաջանալու տեղ կը յետադիմեն:

Երբէք չ'է տեսնուած ամբողջ շրջան մը որ կռիւր անպակաս ըլլայ իրենց մէջ:

Ըսածս հաստատուելու համար վկաներու պէտք չ'կայ, խումբը երկուքի բաժնուիլը հաստատ ապացոյց է:

Ալիքսանեանի բաժնուելէն ի վեր՝ Մնակեան խումբը չ'է կրցած և չ'պիտի կրնայ ժողովուրդին ճաշակին զոհացում տալ և խաղ մը ներկայացնել:

Առանց Ալիքսանեանի ներկայացում մը, աղը մոռցուած կերակուրի կը նմանի:

Սակայն թող չի կարծուի թէ նկատումով մը կուզեմ բարձրացնել Ալիքսանեանը, երբէք, ո՛ր եւ է առնչութիւն մը և կամ կապ մը չունիմ ո՛չ մէկը գովելու և ո՛չ ալ միւսը պարսաւելու:

Միւս կողմէ ալ պէտք է ըսել որ առանց Մնակեանի՝ Ալիքսանեան չ'պիտի կրնայ յաջողցնել իր ծրագիրը:

Մնակեան ու Ալիքսանեան, երկու տարբեր զօրաւոր ուժեր են, որոնք միասլով կրնան լաւ արդիւնք մը արտադրել:

Այս բաժանումը թերեւս օգտակար ըլլար եթէ մեր մէջ դերասանութիւնը այնչափ ինկած ասպարէզ մը չ'ի նկատուէր:

Մենք դերասանը կը թարգմանենք օլիմպի ու բնականաբար օլիմպի բառն ալ լաւ չի հընչէր ականջի տրուելու դերասանութիւնը կը մնայ ստորին արուեստ մը:

Շիտակը այս բանը շատ ցաւալի է:

Եթէ ըսածիս հակառակը ըլլար՝ այսօր շատ պատուաւոր երիտասարդներ պիտի ներկայանային իր բանիսա, և Ալիքսանեան ալ պիտի ունենար իր շուրջը պէտք եղածին չափ խումբ մը, որով պիտի կրնար շարունակել մէկ կողմէ իր գործը և միւս կողմէ պատրաստել ապագային համար լաւ դերասաններ:

Մէկդի ձգենք այդ տեսակ ծիծաղելի ու պարսպ մտածումները: Գոնուած խումբին անդամները երիտասարդներ չ'են գրեթէ, չատերը իրենց կեանքին աշուտին մէջ կը գըտնուին, նորերու պէտք ունինք, որպէս զի մեզ պատիւ բերող թատերական ասպարէզը կարենանք շարունակել միշտ:

Վստահ եմ որ ասոնք երբէք նկատողութեան չ'պիտի առնուին և երբէք չ'պիտի փոխենք մեր գաղափարը դերասանին մասին:

Քանի որ այս այսպէս է, ասոր միակ դարմանը՝ պէտք է որ Մնակեան էֆէնտի իբր Դերասանապետ Օսմանեան խումբին, ժողովէ բոլոր դերասանները, խրատէ զօնոնք հայրաքար ու համերաշխութիւն մը դնէ անոնց մէջ:

Եւ ես պիտի առաջարկեմ որ Մնակեան խումբը փոխանակ մէկ ըլլալու՝ երկուքի բաժնուէր, մէկը Տրամաթիք, իսկ միւսը Զաւեշտախումբ, մի եւ նոյն Տնօրէնութեան տակ, սակայն որով այն ատեն հասոյթներն ալ զգալապէս պիտի չատնան ու դերասաններն ալ իրենց յարմար դերերով պիտի ներկայանան հանրութեան:

Կարելի է արդեօք ... (*) :

ՆԵՐՇԵԱՊՈՒՀ

(*) Մեր համակրելի աշխատակցին այս արդար և իրաւացի առաջարկին առթիւ կը խնդրենք մեր յարգելի դերասանապետ Մնակեան էֆէնտիէ, որպէս զի հաճի իր կարծիքը յայտնել այս մասին, նոյն այս էջերուն մէջ: Ծ. Խ.

ԱՄԲԱԿՈՒՄԻՆ ԽՕՍԲԵՐԸ

Ուր Ամբակում, առաջին անգամ ըլլալով, իր մէկ մեռած բարեկամին վրայ դամբանական մը կը կարդայ:

Ինչպէս որ փարիսեցիներն «ուղար կը կընէին և մօղուկը կը քամէին» անանկ ալ դուն, ասդիլինին անդիլինին ունեցած պարտքերդ կը կլանէիր և ամենուն վրայ լեմոն կը քամէիր...

Գնա՛՛ քնացիր խաղաղ ... Խաղաղական Ովկիանոսին քար հանելու աստիճան...

Դո՛ւն որ մահուան վրայ երբէք մտածած չունէիր. երբ ան երեւակայութեանդ կը ներկայանար մանգաղ ի ձեռին... երկրագործ կը կարծէիր, և իր կմախք մարմինը... Վէնսան Ֆօհանեանին զոյգ մը սփէթները...

Քնացի՛ր, որովհետեւ շատ յոգնած ես և քունը քեզի պիտի կաղդուրէ...

Սակայն բան մը կը մտածեմ. ինչպէս

պիտի կրնաս մինակ պառկել հոտ, դուն որ մի՛շտ զոյգ պառկելու վարժուած էիր...

Ո՛վ դուն, որ արդար ես ... Եալօվայի իւղերուն պէս և անարատ... Յղութեան Մաքսաներուն պէս...

Աղէկ դիտեմ որ արդարոց դասը պիտի երթաս... եռաձայն երգելու... առանց Ղալաթիոյ Դպրաց Դասուն մասնակցութիւն ունենալուդ...

Դուն որ քանի մը անգամ ինկած էիր... կիներու ետեւէն, միտքէդ կանցնէր որ օր մը, երկու մեթր խորութեամբ փոսի մը մէջ պիտի իյնայիր... առանց մէկ տեղը ցաւցնելու:

Կիները գլուխդ կերան ... բայց ի՞նչպէս կերան որ՝ գացած ատենդ գլուխդ տեղն էր:

Վաղը միւս օր, եթէ ձմեռը դայ ի՞նչ պիտի ընես սիրելի՛ն, ցուրտէն փայտ պիտի կտրես, և ի՞նչ մտածեմ որ, կարելի չէ՞ քեզի վառարանիս մէջ վառել...

Բարի պտուղ մը եղար ... եւ փորի ցաւ չպատճառեցիր...

Շատ վարպետ էիր... գլուխ արդուկելու մէջ...

Առանց սիրոյ ապրող մարդը մարդ չէ, ահա ասոր համար կաթնավաճառ Եօրկին ... սեր հայթայթեց քեզի...

Հոգիդ վարդերու մէջ գնաց փթթիլ ... ու մարմինդ որդերու մէջ փտտիլ...

Փոխանակ աշխարհի չըջանը ընելու ... կիներու չըջանը ըրիր և այնքան չըջեցար որ ... գլուխդ դարձաւ և ինկար...

Դուն որ կարգալ չէիր գիտեր... ինչպէ՛ս կը կարգայիր կիներու սիրտը...

Դրե՛լ ալ չէիր գիտեր, բայց... անոնց անունները սիրտիդ վրայ կը գրէիր...

Ինչո՞ւ համար սիրտդ կիներուն տուիր չէիր գիտեր որ մարդ... առանց սիրտի չապրիր...

Հիմակ կունակի վրայ պառկած ես ու երկինք կը նայիս ... օթերեւութաբանութեամբ զբաղելու համար, որովհետեւ՝ երկրաչափութեան մասնագէտ էիր և... ալ վաղ անցար:

Այդքան տա՛ք է հոն՝ որ մերկ կերթաս...

Օրհնեա՛լ ըլլայ յիշատակդ...:

ԱՆՄԵՌՈՒԿ



ՄԻՏԱԼԻՆ ԵՐԿՈՒ ԿՈՂՄԸ

[ՍԵՒ ՃԵՐՄԱԿ ԿԱՐԾԻՔՆԵՐ]

ԶԱԶԱԻՃ

Երկու հասուկ ու անցուկ օրիորդներ, չեմ ըսեր թէ ո՛ր գիւղին, ո՛ր պարտէզին, ո՛ր ծառին տակ նստած կտուց կտուցի կը խօսակցէին այնպիսի ոճով մը, որուն կարելի է նմանցնել ծովաբազմիքի տէքօլթէն, կէս գոց կէս բաց:

Մինչեւ հիմա կարելի է սա համոզումը ունէիք թէ, մինակ զըռչըգտը միւսիւններն են որոնք երբ իրար գան՝ կնկան, աղջկան վրայ կը խօսին, բայց տեսէք թէ երբ երկու չափահաս և մէկ տարիք օրիորդներ իրարու մօտ գտնուին և թէ առանձնութիւնն ալ նըպաստէ, ինչո՞ր կը խօսին էրիկմարդոց նկատմամբ, մանաւանդ այդ սեռին երիտասարդներուն վրայօք:

Պէտք է աւելցնեմ որ օրիորդներէն մին օտար վարժարանէ մը չըլանաւարտ էր, իսկ միւսը՝ մօրը թեւերուն տակ խնամուած:

— Ես կուզեմ որ, կ'ըսէր զարգացածը, երիտասարդը մոմի մը պէս վառի, հալի դէմըս, սէրը մըկէ զինքը, ու ես անոր հառնումին վրայ նայելով՝ յագուրդ տամ սրտիս ու պահ մը ըմբոշխնեմ տաժած սէրս իր վրայ ...

— Հայտէ՛, ճանաւար, կիւնաս չէ՞ զավալըին, ես մէկը սիրելու ըլլամ պիտորնէ, դէմը խուլ ու խուռպան կըլլամ, ծառքէս գայ նէ հիչ ուզածին դէմ չեմ կենար քի, չելլայ սիրտին դնէ տէյի, կը պատասխանէ մօրը զաւակը:

— Շատ աղէկ հոգիս, դուն աւելի դրական աղջիկ մըն ես, քեզի բան մը հարցնեմ, ի՞նչ դէմքի վրայ տղայ մը կուզես սիրել, ըսէ տեսնեմ, ճաշակդ հասկնալ կ'ուզեմ ...

— Հա՛, նայէ քի ըսեմ, իմ սիրելիք տղաս, իրի-եառը ըլլալու է, սանկ օմուզները լան, էլլի այախլը, պըլըմները բալա, աչքերը քէօմիւրի պէս սեւ տէ, պօչով պօչով, հէմ ալ խուլէթլի, սանկ օտային օւթան քալելու ըլլա՛յ նէ, թէմէլները սարամիչ ընելու է ... Դո՛ւն:

— Բալորովին հակառակը, ան որ իմ սիրտըս պիտի գրաւէ, պէտք է նախ տխեղծ ըլլայ, տկարակաղմ, միշտ հատնող, նիհար, դալկաղէմ, պիտերը շատ նուրբ, և աչքերը քաշող, երկայնահասակ և ... քիչ մըն ալ հիւանդոտ ...

— Հիւանդո՞տ ... կ'ըսէ ընկերուհին, մեղայ մարապետ ես զահէր քի, ատ հիւանդը դնես վերցունես ... քուկին խելքիդ է եկեր քուրուկս ...

— Ախ հոգիս, չես գիտեր թէ այդ վիճակը ունեցող երիտասարդ մը ի՞նչ անուշ համուում մը կ'ունենայ քեզի հանդէպ, անոր ամէն մէկ նայուածքը մէկ մէկ հատոր, և մէն մի շունջը մէկ մէկ աշխարհ կը պատկերացնեն աչքիդ առջեւ: Ես կուզեմ որ սիրած երիտասարդս տառապի դէմս, որովհետեւ այդ տեսակներն են որոնք գիտեն արթնցնել սէրը իրենց դէմինին մէջ ...

— Խալթ ես կերեր քուրուկ, աֆ կընես ամա, էօմրիւս մէջը տէլիխանլը մը պիտի սիրեմ նէ, մէզառ խախընի մը դէմս առնեմ տէ անոր չէնյէ նետելը սէյիր ընելու չեմ, տէլիխանլը ըսածդ, սանկ դէմդ առնես՝ մուհապէթ ընելու ըլլա՛մ նէ, համ առնելու ես հա՛մ ...

— Այդպէս է, ճաշակները կը տարբերին թէեւ, սակայն գիտցիր որ քու ընտրած և հաւնած կազմուածքդ ունեցող տղաք, սէրը դուռը կը հասկնան, և կը սիրեն ի պահանջել հարկին, լոկ ֆիզիքապէս օգտուելու համար, և երբէք դէմինին սէրը՝ զգացումը չեն մըտածեր: Հաւատայ խօսքիս, եթէ կուզես որ երիտասարդը, որուն համակրած ես, օր օրի աւելցնէ իր սէրը վրադ, նայէ որ զգայուն ըլլայ, զգայնութիւնն ալ հիւանդ մը կ'ունենայ և ոչ թէ անզգայ մսեղն զանգուած մը:

— Պօշ լա՛ֆ ... քա ճանըմ ուր է քի տէմիրի պէս սաղլամ էրիկ մը ունենաս, ըսող խնդացող, ուտող խմող, խուլէթլի, բռնածք փրցնող քի, սանկ թեւդ առնելու ըլլաս

նէ, հասկնայա քի էրիկմարդ մը ունիմ տէյի, չէքի անանկ էօրիւնճէկ եարուլու փրկիչէն եւ լած հասթամիճալ մը, ինծի կուգայ քի, խուվէթի մարդուն սէրը իլէն սիրելը տահա զօղու կըլլայ, ան քու ըսած նանէ մաճունի տէլիխանլըին կէօքսը թէնէքէ տառցած է նէ, անոր տիպի սէրը ինչ խուվէթ կունենայ...

— Ախ ... հատնիլ կուզեմ, հասնիլ, հատցնել դէմինս ալ ...

— Չըսեմ քի մօթութի եմ տէյի, էօմ-բիւս մէջը ասանկ սիրել չէյի տեսեր, քա ինչ տէյի հատցունեսս պիտի, ինչ տէյի ետեսնի իյնաս ...

— Իմ ըմբռնած հատնումս տարբեր է հոգիս, մոռնիլով մեռնելուն պէս է ան, անուշ երազներու մէջ կըլլայ մարդ, աշխարհ հեշտ կերեւայ աչքին ... Դուն չես գիտեր անուշս, դուն սէրը ֆիզիքապէս միայն կըմբռնես, անոր հոգեկան վիճակն ալ կայ որ նախորդէն շատ գնահատելի է ...

— Ես քեզի բան մը ըսեմ, ծունը գլխուն ան տղուն քի քեզի էրիկ պիտի ըլլայ, եանի աչքէ ելած խոթ ակապար մը պիլէ ունենայի նէ չէի հաներ տէ քեզի տար ... ամա հոգիս պէս կը սիրեմ քեզի, ֆախաթ ատ խույըդ սոսկում կը բերէ կոր վրաս ...

— Շատ լաւ, կըսէ զարգացած օրիորդը, ուրիշ բաներ պիտի հարցնեմ, ո՞ր տարիքը տղաքը աւելի կը սիրես և կուզես կապուիլ, ամուսնանալ ...

— Էրիկ ըսածդ ալ քի մը խելքը կ'ոխը ըլլալու է անանկ չէ՞, բէք ալ հոգալան եարամիշ չըլլար, ես կուզեմ քի սիրականս, եախօտ առնելիք էրիկս, եռսունը թրոմալամիշ ըրած ըլլայ, դո՞ւն ...

— Բոլորովին հակառակը, ինչպէս բոյսերուն մէջ՝ նոյնպէս մարդուն թարմը աւելի յարգի և ակործելի է: Կուզեմ որ ամուսինս ունենայ այն տարիքը՝ զոր ունեցողները դեռ դպրոց կերթան, տղայ, անփորձ և նոր արթնցած, որուն սիրտը դեռ խմոր, իմ սիրոյս կաղապարը պէտք է առնէ: Տղայ մը սիրելը, չի բացողած վարդի կոկոն մը հոտոտելուն կը նմանի ...

— Իրաւ ես, հէմ կընիկ եղիր հէմ ալ անոր տատաութիւն ըրէ, ցերեկները լաստիկ թոփ թող խաղայ, չէմպէր դարցնէ, իրի-

կուններն ալ հէլլաք ըլլայ, թող գայ ծուն-գիդ վրայ խըռըլ խըռըլ քնանայ ... Եաղմա եօք, զօղս ինչ է քի էլին բիճը առնեմ տէ տատաութիւն պիտի ընեմ, քի մը տարօք ըլլայ քի կընիկ ինչ ըսել է նէ հասկնայ տէ քիթս ի վեր ըլլայ տայիմա ...

— Որչափ սխալ գաղափար հոգիս, տարիքնիւն լեցուն երիտասարդները, զգուած, յոգնած ըլլալով կեանքի փոթորիկներէն, կինը նաւահանգիստի տեղ կը դնեն, ուր կուգան ապաստանիլ իրենց մարմնոյն հանգիստին համար, մինչդեռ երիտասարդ տղայ տարիք ունեցողները, կրակոտ նաւաղներուն պէս կըլլան, փոթորիկին դէմ դնող ու իրենց նաւը խռովայոյզ ովկիանոսին ընդ առաջ քշող. կինը իրենց տոկուն նաւն է, զոր կը քշեն կը վարեն մեքենական փութկոտութեամբ և որ յոգնիլ չեն գիտեր, թուլնալ չեն գիտեր ...

— Աֆ կընես, իրաւ քի ես շատ գրող կարգացող չեմ, խելքս ատանկ պարակ բաներու չի հասնիր ամա՞, կարգուիլը, գիր գրել, գիրք կարդալու հետ գործ չունի, ատանկ խառնճա. այաղի զուրցուածքներդ իրաւ քի չեմ հասկնար կոր ամա՞, կը հասկընամ կոր քի, դուն չօճուլս էրիկ կուզես կոր, էմգիլը պերանը, տահա տօղրուսը ... չոր կապած ...

— Այդ նրբութիւններուն և գաղտնիքներուն չես կրնար թափանձել հոգիս, ուրիշ բան մը հարցնեմ, ամուսինդ ուսեալ կուզես որ ըլլայ թէ ոչ թերուս ...

— Հապա՞ ... վարժապետ խաֆալը մը առնեմ քի, իրիկունները գալուն կիպի, խաղէթան առնէ նստի, կիրակի օրերը կարգայ գրէ, ես ալ կատուի եավուուի պէս դէմը աննիմ թաթս լըղեմ ... չէ պապամ չէ, ինծի պէս սաղլամ ըլլայ, պաշխա բան չեմ ուզեր քի, վախիթ ունենանք ճիւլէլէլմիշ ըլլալու ...

— Ես հակառակը կը խորհիմ խուշս, որչափ ուսեալ ըլլայ՝ այնքան հաճոյ է ինձ համար, կուզեմ որ օրն ի բուն նստի կարգայ այն անուշ բանաստեղծութիւնները, որոնց ընթերցումը մղում կուտայ սիրոյս, ալ աւելի կը հրահրէն հոգիս, և միշտ թարմ կը պահէ իր վրայ տածած սէրս: Որչափ անուշ է

խօսակցիլ ամուսնոյ մը հետ որ կզգածուի, կը սիրէ գրականութիւնը: Երեւակայէ սա- զարդախիտ ծառի մը շուքին տակ նստիլը անոր հետ, գլուխը ուսերուս վրայ, գիրքը ձեռքը և որ ամէն մէկ քառեակին աչքերը կը բերէ կը կեդրոնացնէ իմիններուս մէջ, հո- գիիս խորէն քաշելով այն անուշ զգացումը որ սէր կանուանուի ...

— Էյ ամա՛ն սուս ալթըն, վրաս կէշու- թին եկաւ, քիչ մըն ալ ուրիշ խօրաթայ ը- նենք, սա պիտի ըսէի, ի՞նչ ըրիր թորգումին հետ ... Կուսուածախ մը պոէքիմ քեզի, գիտես քի կլիցի՞ ...

— Ա՛ ... աղէկ որ անոր խօսքը ըրիր, տեսար ապուշը, երեք ամիսէն ձգեց հեռա- ցաւ, ահա այդպէս կըլլան քու ըմբռնած ե- րիտասարդներդ, որոնք ոչխարի միսը՝ գե- ղեցիկ միսէ մը աւելի կը նախընտրեն ...

— Բէք ալ աղէկ ըրեր է տղան, ես ի՞նչ կուզէիր, դէմդ ամենք տէ իփէկ պէօճէյի՞ դառնար ... Կէրիֆը կարգուիլ կուզէ կոր եղէր, դուն իսէ իմացածիս նայելով, պու- ճախ մը քաշուած հապրուէ էրկինք կը նայիս եղէր ...

— Այո, որովհետեւ իմ գաղափարակիցս չէր ...

— Նասը, կուզէի՛ր քի տղան քեզի ույ- միշ ըլլար տէ պարսկը պոններ ...

— Միթէ քիչ մը առաջ չըսի՞ որ սէրը հատնումին մէջն է ...

— Եա՛, հախ ունիս, ետքէն ալ տղան, մէզառին մէջը ...

Եւ հիմա որ տեղեկացաք տարբեր զար- քացումի տէր օրիորդներու գաղափարներուն, պիտի խնդրեմ որ, զանազանութիւն մը դը- նէք այն օրիորդներուն միջեւ, որոնց մին Բառէէն գլխարկ կը գնէ, իսկ միւսը՝ Գուլե- գաբուէն:

ԼԻՆԱ

ՅԱՋՈՐԴ ԹԻԻՈՎ

ՄԱՏՄԱԶԷԼԻՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Խիստ հետաքրքրաշարժ և զիւպէտարոյր յօդուած մը՝

ԱԲԱԶԷ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲՈՒՄԷԼԻ-ՀԻՍՍՐ. — Թաղ. Խորհրդա- րանը գոցուելով՝ խոսխոճաման բալլի՛քը ժամկոչ աղբորը յանձնուեցաւ:

ՆՈՅՆ. — Կիմանանք թէ թաղականցու երկու պիզ պըլըխներ, մին շրջանաւարտ, միւսը մէկ կարգը չորս տարի քօնթրաթ ը- նող, լէվին լէվին պաշտօն կը մուրան: (Չենք գիտեր թէ ի՞նչպէս պիտի համաձայնին եր- կուքը, դպրոցականը թաղական ... չօգ չէ՛յ ... Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Գուլալը շապիկաւոր թաղեցի մը, չորս ոտքով բանի վրայ է, որպէս զի այդ չիֆթէ խումբիները թաղականի աթոռ նստեցնէ, չեմ գիտեր ի՞նչ անձնական հաշիւ- ներ մաքրել տալու համար անոնց:

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Հապա բաքէթ բա- քէթ քուէները տուփը ձգողը, ցերեկին լապտերով տուն տուն պտրտկողնե՛րը, տաս- նոց սուրճ մը հրամցնելով «քուէդ այսինչին տուր» ըսողներուն վրայօք բան մը չէ՛ք գը- րեր մեզի:

ԳՈՒՄ-ԳԱԲՈՒ. — Տեղւոյս քէհեա պա- պաէն կը խնդրուի՝ որպէս զի նոր թաղա- կանի ընտրութեան նամակները միմեկի ալթը ընելով՝ խամուրիչիի չի խառնուի: (Դուն ստասիօնին խախլէն նառկիլէդ քաշէ, ին- չո՛ւղ պէ՛տք ... Ծ. Խ.):

ՉԱՐՇԸ-ԳԱԲՈՒ. Ժամացուցներու շու- կան. — Ժամավաճառի ուժախ Արթին աղ- քարին կիմացնենք որ լեղուազարութիւններ չընէ լսելէ վերջ այս գրուածը, ապա թէ ո՛չ յայնժամ կը խօսի Աւետարանը որ կըսէ. «որ ոչ լուիցէ ունկամք՝ լուիցէ թիկամք»: (Ատ լեղուազար ուշախին տրուելիք քերպիլէն իր չորպաճիին կը յանձնենք. Ծ. Խ.):

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Երգումի մէջ կարող դործակալ մը չի կրնալով գտնել, կը խընդ- րինք մեր Պատ. Բաժանորդներէն որ հաճին օրը օրին ուղղակի մեզ հասցնել իրենց բաժ- նեգիւնները, երեսնուս տեղիս պատուել չի տա- լու համար: (Հո՞ս ես Վ. Տիգրանեան) ...:

Արտօնատէր ԱՐՄԷՆ ԼՈՒԹԵՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Յ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի հաստի քիւ 52.

«ՀԱՆՐԱԳԻՏԱԿ»-Ի ԹԵՐԹՈՆԸ — 3 —

ՎԱԳՐԻ ՄԸ ՀԵՏ ԱՌԱՆՁԻՆ

ՈՐՍՈՐԴԱՎԷՊ

Ժամէն աւելի անցաւ, ու այդ միջոցին երեքնիս ալ շարունակեցինք մեր բռնընտելի դարձը տակառին շուրջ: Մարդկային կարողութեան սահմաններէն վեր է այլ եւս, մեր տղայական վազվզուքը շուրջանակի...: Վայրկեան մը ե'ւս, և ահա քարիթէնը ու ես կիսամուռ պիտի իյնայինք տաժանքէ և պարտասուած...: Բարեբաղդաբար կենդանին մենէ աւելի նուազ համբերութիւն ունեցաւ և իր զայրացկոտ բնոյթը չի հաշտուեցաւ այս ապարդիւն գործողութեան հետ:

Վագրը վայրկեան մը անշարժ մնաց, որպէս թէ մեծ որոշում մը կը ծրագրէր. յետոյ իր վրայ ծալուելով, իր բոլոր ուժերը կը հաւաքէ, յանկարծական թափով մը, կ'ուզէ մէկ ուստումով կտրել անցնիլ զմեզ յաճոյք արգելքը, սա ողորմելի տակառը...:



... Ու վագրին՝ դէպի մեզ ջանք մը քրած միջոցին.

Մէկ դղրդիչ մտածում մը միայն ունեցայ, այն է մահուան ստուգութիւնը, և ծունկի վրայ ինկայ: Վայրկեան մը վերջը, տակառին ապրելուս վրայ զարմացած, կը հնազանդիմ բարեկամիս ձայնին որ կ'ըսէ «եւէ՛ք, Ռօպէն...»:

Հասկցայ այն ատեն. բաղդերնիս բանուկ եղած էր, և տակառին բացուած բերանը վերի կողմը կը գտնուէր, ու վագրին՝ դէպի մեզ ջանք մը քրած միջոցին, քաջարի բարեկամս, զինքը յատկանշանող պաղարիւնութեամբը, ոտքովը անա'նկ ուղղութիւն մը տուաւ տակառին որ տապալեցաւ վայրի գազանին վրայ: Վագրը

այն ատեն ինքզինքը բանաւարկուած գտաւ վանդակի մը մէջ, ուր լոյսը լայնէկէ ճեղքի պէս բացուածքէ մը միայն կը մտնէր:

Բարեկամս մէկ ուստումով ցատկած էր պատնէշին սարահարթին վրայ և ոտք կը դնէր այս նորօրինակ խորվիրապին վրայ, զոր իր հանճարը և իր պաղարիւնութիւնը ստելծած գործած էին՝ ահարկու թշնամին զսպելու համար:

Ինքզինքիս գալով, տակառը կը մագլցիմ և բարեկամիս քով կանգ կառնեմ:

Մեր ուրախութեան արջունքը յանկարծ տեղի տուաւ արդարացի սոսկումի մը, խորհրդածութիւնը մեզի յայտնեց թէ՛ միակ մեր դիրքը տարապայման կերպով չէինք բարւոքած, ոչ մէկ միջոց ունէինք հաղորդակցելու համար գետեզրը գտնուած մեր նաւաստիններուն հետ, չէինք կրնար երկար ստին կենալ այս տեսակ մը փայտէ ռազմավայրին վրայ, որուն տակ ահեղ գետք մը կը մռնչէր և որ սակայն մեր տէրը պիտի ըլլար՝ անկէց հեռաջած վայրկեանուս իսկ:

Արեւը զգալապէս դէպի մայրամուտ կը խոնարհէր, և իր վայրէջքը մեր մէջ կ'արծարծէր մեր յոյսերը մեր մարդիկը մեզի օգնութեան պիտի փութային:

Թէպէտեւ վագրը քիչ միջոցի մը մէջ էր որ կը շարժէր և ասիկա կը չեզոքացունէր մեր թշնամիին մկաններուն ուժը, այնու հանդերձ կը լսէինք որ խուլ կերպով կը գոռար, հրաբուխի մը պէս որ մօտակայ պայթում մը կրսպառնայ: Կարծես թէ հանքի մը վրայ կեցած

էինք, որ մէկ վայրկեանէն միւսը աւեր պիտի սփռէր: Մինչեւ այն ատեն քարթիկներն անշարժ մնացած դէմքը անստուգութեան արտայայտութիւն մը կը ստանար, զոր ի վրէժ կը ջանար ծածկել: Յանկարծ դիմագիծերը մեղմացան, ժպիտ մը լուսաւորեց իր տփուրն դէմքը, ցուցամասը դրաւ շրթունքներուն վրայ, որով ինծի կը հասկցնէր թէ պէտք է լռել, յետոյ տեսայ որ ծռեցաւ, ուշադրութեամբ մը ծնրադրեց, և աջ ձեռքը երկնցուց իբր թէ Ամերիկայի գեղեցիկ լիճերուն մէջէն կարմրախտ կորսար, և ի՛նչ ընելիքը դեռ ես չի գուշակած, ուղղութեամբ և տեսայ որ բռնած և պարանի (հալատ) մը պէս իրեն կը քաշէր ճիւղին պոչը, զոր նշմարած էր ճեղքին եզերքէն, և զոր մինչեւ արմատը քաշած էր: Կրքածիս չափ օգնեցի այս նոր գործողութեան:

Մաթեմատիքականօրէն ճշդութեամբ էր՝ այլեւս թէ որքան ատեն որ կարենայինք պահպանել տակառը վազբին և մեր մէջ, մեր փրկութիւնը ապահովուած էր:

Կրնայինք յուսալ այսպէս որ կենդանին մինչեւ գետեզր պիտի քաշէինք, և հոն մեր ընկերներուն օգնութեամբ անոր տիրանալով, ողջ ողջ պիտի կարող ըլլայինք տանիլ զայն Բարիզի բուսաբանական պարտէզը և կամ Լոնտոնի կենդանաբանական պարտէզը և զայն ցուցադրել սովորական բանաձեւի կարգ անցած հետեւեալ բառերով.

Ազնուագոյն վագր (եգ) դրուած քաբիքէն Մաթ-Քլեմերմէ եւ Պ. Ռօպէռէ:

Թերեւս երկուքնիս ալ, ընկերս ու ես, մի եւ նոյն մտածումը ունեցած էինք, առանց իրարու հաղորդելու:

Խոհեմութեամբ տակառին վրայէն վար ինջանք:

Բայց մեր հաշիւները հաշիւ մնացին միայն: Մենք շատ գէշ հաշուած էինք մեր փոխադարձ ուժերը, վաճառքի, թէեւ վագրը զրկուած իր ետեւի ոտքերու գործածութենէն՝ սակայն կրցաւ մեզի քաշել տանիլ ուղածին պէս, և ինքն իսկ գծեց ընթանալիք ճամբուն ուղեգիծը: Չայն կեցնելու համար մեր ըրած բոլոր ջանքերը ապարդիւն մնացին: Ասանկ սոսկալի ուժ չի կրնար ըլլալ... Ան կ'ուղղուէր միշտ, մենք ալ ետեւէն, դէպի երկրին խորքը, շարունակելով իր խուլ մռնչիւնները, և մեզի նայելով իր վայրագ նայուածքովը, իբրեւ թէ զմեզ կը նկատէր իր ստացուածքը:

Մզոն մը տեղ գացինք այսպէս, հոգինիս բերաննիս եկած, քարթիկներ պինդ բռնած կենդանիին պոչը, իսկ ես, իմ խեղճ մարմնոյս բովանդակ ուժովը կառչած քարթիկներն հագուստին ծայրերուն:

Հոս, պարոններ, պէտք է խոստովանութիւն մը ընեմ, յանուն պատմութեանս ճշմարտութեան, և ցուցնեմ ձեզ թէ ի՛նչ կ'արժէ մարդ էակը, երբ իր անհատական փրկութեան և շահու հարցը խնդրոյ առարկայ է: Այո՛, պիտի խոստովանիմ որ դժօխային մտածում մը անցաւ ուղեղէս և փորձութիւնը ունեցայ թող տալու ընկերոջս հագուստները և լքել զայն:

Ինչ որ իբրեւ արդարացում անձիս կրնամ ըսել, այն է որ եթէ ես բռնած ըլլայի կրնալիս պոչէն, և ընկերս ալ իմ հագուստէս, ինք ալ թերեւս իմ ունեցած մի եւ նոյն մը մտածումովս պիտի համակուէր:

Թերեւս, դուք Պարոններ, բոլոր հոս գտնուողներդ ալ մի եւ նոյն փորձութիւնը ունենայիք նմանօրինակ պարագայի մը մէջ: Կ'ուզեմ հաւատալ այս բանին, խիղճս աւելի թեթեւ զգալու համար:



... Իրեն կը քաշէր ճիւղին պոչը.

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՈՅՐԱՅԵՐՈՒԹՅԱՆ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԵՐՄԷՆԵԱՆ եւ Հնկ.

Գ. Պոլիս, Սուրբան Հարան, Թօփաչեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկունութեամբ եւ գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
գիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բեղուններու
եւ տղայոց շիք եւ գիմացկուն ֆաբրիկ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ չերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նման-
ընկալ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրոյ է:
Գաւառներէն յանձնարարութիւնը
փութով կը կատարուին: 50 — 42



ԱՌԻԹԵՆ

ՕԳՏՈՒԵՑԷ՛Ք

ՓՈՒԹԱՅԷ՛Ք ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեպալ պէյ խանին
նալ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյլանէ,
Չինաստանէ, Հնդկաստանէ, Ճապոնէ եւ Ճա-
բոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտոյն ու համովը:

Վիտուեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

Ա. Պ Ա Ռ Ի Կ

6 ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ
5000Է ԱԻԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիդի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բազմատեսակ գորհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, և այլն. նաեւ անուններու սկզբնատառով զոհարարարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձեւ չղթայներ, նստեցմէ զատ տաէն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ զգեստներ, կգլխներ ու գլխարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաեւ մուշամպա վեջաբլիւններ, բուրդէ և մետաքսէ շրջագգեստի կերպասներ, պատրաստ ճերմակեղէններ նաեւ խոսա, ամերիգան, պասմա, եւ այլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ լուացքի, լուսանկարի, կրամֆօն, ինչպէս նաեւ կարի (ձօնս. նովման) և այլն:

Ունինք նաեւ եւրոպական նուրբ ճաշակով պապրաստուած կահ կորստիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի մեր բերեալ պմէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաեւ բաղնիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ և լին:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ չահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաեւ իր ապրանաց տոկոսութիւնը, նրբութիւնը և ածաւնութիւնը:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարկւրին 5 ղեղ

Շաբաթական և ամսական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք դիմել ՀԵՐՃԱՅԻ վաճառատուն

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶՈՑ ՄԵԾ ՊՈՂՈՑ ԹԻՒ 13

50—34



ՐԵԻԵԼՔ

ՕՐԱ-

ԹԵՐԹ ազգային, գրական եւ ֆաղափական:

— Բաժանորդագրութիւն տարեկան Կ. Պոլսոյ համար 80 դրուշ, գաւառներու համար 108 դրշ. և օտար երկիրներու համար 35 ֆր.: Զեռքէ վաճառում՝ քաղաք փառա: Հասցէ՝ Ղալաթիա, Բամանտօ փողոց: ԱՐԵԻԵԼՔ հրապարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խորհամալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵԻԵԼՔ, իր վերակազմուած խորհրդագրութեամբ և իր կարող աշխատակիցներ-

բով, տալիս արագ տեղ մը կը գրուէ տեղական հայկականութիւն մէջ, օր աւուր տեղի հրապարակ գաւառայով՝ նորանոր լուրերով: Ներու շնորհիւ գորս ներմուծած է թերթին մէջ: Կր. առաւելութիւններէն մէկն է ՊԱՏ. ԿԵՐԱՅԱՐԳ քլալու հանգամանքը, որով իր ընթերցողներուն հրահրկայացնէ պարբերաբար: Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւ այլն, բաց ի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ ու Զուարթնոթերէ, որոնք նիւթերու ճոխ պէսպիսութիւն մը կը կազմեն: